

1643-ին Ֆրանսացի մեծանուն ուղեգիր J. B. Tavernier.

«Զմիւռնիոյ առեւտուրը շատ մեծ է: Գըլխաւոր ապրանքը, զոր Ֆրանկները ասկէ կը փոխադրեն, հում մետաքսն է, որ Հայերը Պարսկաստանէն կը բերեն»:10)

Իսկ դարձեալ Ֆրանսացի ուղեգիր John Thenot, կը գրէ.

«Գլխաւոր առեւտուրը (Զմիւռնիոյ) կը բաղկանայ Պարսկական մետաքսէ, թէ՛ հիւսուած եւ թէ՛ թելախուրժ, կրօկրամէ, հոս բերուած Պարսիկ եւ Հայ վաճառականներէ»:11)

Tournefort այսպէս մետաքս տանող կարաւաններու հետ կարինէն թողատ կը հասնի, ուրկէ Անկիւրիա երթալու համար նոր կարաւան կը կազմուի 10 հոկտեմբեր 1701-ին, նոյն այդ կարնէն եկած կարաւանէն եւ Գառապուլազի մէջ իրենց միացող նոր կամ երկրորդ կարաւանէն: Ասոնց վրայ կ'աւելնայ թողատի մօտ հասած Հայ վաճառականներու հում մետաքսի մէկ կարաւանը: Այս նորեկներուն համար ան կը վկայէ, որ «քսանեւջորս օր ճանապարհորդած էին Գանձակէն կարին, եւ այլապէս պէտք եղածէն վեց օր աւելի ճամբորդած էին Թիֆլիզի տուրքերէն խուսափելու համար,

10) The Six Travels... London, 1684 34:— Richard Pococke Անգլիացի ուղեգիրը 1738-ին կը վկայէ, որ Մէխլիշի եւ Պուրսայի մէջ կային մետաքս արտադրող հայեր: Առաջնոյն մէջ կային «200-ի մօտ թիւով հայ ընտանիքներ, ունէին եկեղեցի: Հայերը եւ յոյները մետաքսով կը զբաղին: Անոնք հոս ունին մետաքսի մեծ առեւտուր: Պողանոցներու նման խիտ կը պահուին թթենիներ, որոնք միայն հինգ օտք բարձրութեամբ կը պահուին, ինչպէս որ Պուրսայի եւ բոլոր այս մետաքսի երկիրներու մէջ: Ըստածին համաձայն՝ մետաքսին տարեկան արտադրութիւնը 100,000 տոլարի կը հասնի, եւ մեծ մասամբ Կ. Պոլիս կ'արտաձուի»: (A Description of the East.— 1745, Vol. II. էջ 117:

11) Collection of Voyages and Travels. 1744-48.— London, Harris, Vol. II. էջ 794, Ա. սիւնակ:

ուր տրուած մաքսը շատ մեծ է: Անոնք իրենց հետ ունէին 150 հակ մետաքս՝ բեռցուած 75 ձիերու եւ ջորիներու վրայ, իւրաքանչիւր հակ 26 պարթման կշռող»:12)

Մեր ուղեգիրը 1702-ին կը հասնի Զմիւռնիա, որու մասին կը գրէ.

«Պարսկաստանի կարաւանները շարունակաբար Զմիւռնիա կը հասնին Բոլոր Սրբոց օրէն մինչեւ մայիս եւ յունիս: Անոնք երբեմն տարեկան 2,000 հակ մետաքս կը բերեն հոս»:13)

Անոր Զմիւռնիոյ մասին տուած մեծարժէք տեղեկութեանց կարգին կը վկայուի, որ Ֆրանսացի եւ Հոլանտացի վաճառականներ կը գնեն Հայոց Զմիւռնիա բերած հում մետաքսը՝ իրենց երկիրը արտածելու համար: Եւ մասնաւորաբար 1718-էն վերջ մեծազոյն յաճախորդները այդ մետաքսին անգլիացիներն եղան իրենց Թուրքիոյ Ընկերութեան միջոցով:

Այս շահարկեր առեւտուրին միջամուխ Զմիւռնիոյ Հայ վաճառականներուն համբաւը հասաւ մինչեւ Ռուսիոյ Մեծն Պետրոս կայսերականը, որ Զմիւռնիոյ մեծանուն վաճառական Ապրօներուն հետեւեալ հրովարտակը շընորհեց՝ անշուշտ ցանկալով զանոնք Ռուսիոյ համար շահիլ: Այս հրովարտակին թարգմանութիւնը տրուած է Փարիզ 1857-ին հրատարակուող «Մասեաց Աղանի» ամսագրին մէջ, ուր կ'ըսուի.

«Երբ որ Հոլանտիա էինք, Հայկազն Պետրոս Ապրօ խոնարհաբար մեզի աղերսազրով մը իմացուց, թէ ինք եւ իր երկու եղբայրքը՝ Արբահամ եւ Ստեփան Ապրօ, բնակիչք Զմիւռնիոյ, մեծ վաճառականութիւն ունին Հընդկաստան, Պարսկաստան, Տաճկաստան եւ այս կողմերու եւրոպական թաղաւորութեանց մէջ, եւ իրենց վաճառականութեան մեծ մասը մետաքս է եւ ուրիշ պարսից ու օսեթից բերքեր: Միանգամայն մեծ ակնածութեամբ ան առաջարկեց մեզի, թէ ինքը եւ իր երկու եղբայրքը, իրենց այնպիսի վաճառաշահութիւնը առաջ

12) Անդ՝ 276:

13) Անդ՝ էջ 335: